

ստրանը կրնա լինել և անհրաժեշտ է հարկաւորութիւնները կը բաժնուին : Սակայն մեր գործընկերներու շրջանը կրկնայ 7 տարի 2 4 տարի նախակրթարան և 3 տարի միջնակարգ ուսման շրջանը : Պուլկար ուսանողը 18 տարեկանին շրջանաւարտ կելլայ, իսկ մեր Ֆիլիպէի նշանաւոր լիսէի շրջանաւարտը՝ 21 տարեկանին Գ. դասարանը հազիւ կընդունուի : Ուստի համընթաց յառաջանալու և աշակերտին տարիները խնայելու համար անպատճառ պէտք է փոփոխութիւններ չլինին : Երբեք անպատճառ ամբողջացնելու ալ միջոց չունենանայ, իր ստացած կրթութիւնը զինքը կրնայ պահպանել : Հողը պատրաստուած է. ինքնազարգացմամբ ալ կրնայ առաջանալ, և արհեստի կամ վաճառականի մը քով մանալ. որովհետեւ 16—17 տարեկան վերջացուցած պիտի ըլլայ իր անհրաժեշտ եւ զող ուսումն ու կրթութիւնը :

Կոչում կընենք, Ֆիլիպէի, և Ռուսոյի երիտասարդութեան, որպէսզի նախաձեռնարկ ըլլան և իրենց ուսուցիչները մղեն այս տեսակ հիմնական բարեփոխութեան մը մեր կրթական գործին :

Մտացայ յիշելու որ ծրագրի փոփոխութեան հետ նաեւ պէտք է քննութիւններու ձևը փոխել : Մենք աւելորդ կը համարենք հրապարակային քննութիւններու փաստերը ցուցուցել, քանի որ Պ. Պիօն մանկավարժական «թէզիսներով» զանոնք մէջ տեղ գրաւ : Պ. Չարգարին այդ ամէնը շրջուածքները, չեմ կարծեր որ սովորութեանն առաջ գայ, այլ իր «յամառութիւնէն է» որովհետեւ իր արտայայտած արտառոց և բէտանդ գաղափարներէն այնպէս կեզրակացուենք որ գեր-

մանացի աշխարհաշուական մանկավարժները, «ձեռագրութեան» անգամ չեն կարող ըլլալ :

Սօֆիա

S.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուրկար, 30 Յուլիս

Յուլիս 23 թուակիր նամակ մը, զոր ստացայ Տրապիզոնէն, խիստ ցաւալի յուրեր կը հաղորդէ մեզ : Նմանակազիրը Դէրվանի զիւղերէն է և գրեթէ մի ամիս առաջ իր երկու ընկերներով այստեղէն մեկնեցան ուղղակի Տրապիզոն, ուր հասածուն պէս կը բնակարարուին, թէեւ օրինաւոր անցք գրեք ունէին ձեռքերնին : Մի քանի օր բանտի մէջ սոսկալի խտութեան տակ հարցաքննութեան յետոյ՝ հաստատուն երաշխաւորութեամբ դուրս կելնեն քաղաքէն դուրս շէնքերու պայմանաւ : Ոչ մի կողմ երթալու հրաման չեն տար : այնպէս որ այդ օտար քաղաքի մէջ մնացած առանց դործի և դրամի նօթութեան զոհ գնալու վտանգին ենթարկուած են :

Դարձեալ երկու ամիս առաջ Մշեցի և Վանցի 50ի շափ գաղթականներ Պաթումէն աքսորուելով իրենց տեղերը, կառավարութիւնը զանոնք կը վերագրէին Տրապիզոն, ուր կը սպասեն այժմ ծայրայեղ թշուառութեան մէջ. առանց թոյլտուութիւն ունենալու որ և է տեղ գաղթել, նամակագիրը կը գրէ մեզ. «Երբ մեզ բանտարկող ոստիկանութեան կը հարցունենք մեր Տրապիզոնին մէջ արգիլուելուն պատճառը, սա վճռական պատասխանը կը տրուի մեզ թէ՛ «կառավարութեան բարձրագոյն հրամանն այս է» : Երեւակայեցէք թէ ինչ դժուարին կացութեան պիտի մատնուին ամէն անոնք որ հայրենիք վերադառնալու հա-

մար Տրապիզոնի ոստիկանութեան ճանկը իյնալու դժբախտութիւնն ունենան : Ահա այդ պատճառով մեր թղթակցի փափագին համեմատ, կուզամ խնդրել ձեզ որ բարեհաճիք ներկայս հրատարակել ձեր ազգագուծութիւն մէջ ի գիտութիւն մեր գժբախտ հայրենակիցներէն անոնց, որոնք կը պատրաստուին Տրապիզոնի ճանապարհով հայրենիք վերադառնալ : Պատրիարքը չը կըրցաւ դէթ ազատ երթուելու թեան արտօնութիւնը ստանալ այս թըշուառ ճանապարհորդաց համար, որ բարբարոս կառավարութեան այս վերջին սպանիչ միջոցին զոհ կերթան :

Ուրիշ նամակներ ալ ստացած ենք, որոնք Դէրվանի և Երզնկայի շրջականերու հողային արդիւնաբերութեան նուազութեան և կառավարութեան պաշտօնէից ղեղձումներու պատճառաւ քրիստոնեայ ժողովրդին անտանելի նեղութիւնը կը նկարագրեն մեզ : Մի քանի տարիէ ի վեր այս վերջիններու վրայ խիստ շատ գրած լինելով աւելորդ կը համարիմ մանրամասնօրէն գրել ձեզ : Այսչափ միայն ի բաւ է յայտնելու թէ՛ Դէրվանի սահմանակից Պալապանցի աշխիթի պետ Խալիլ աղան, որ ընդհանուր կոտորածի ժամանակ հարիւրաւոր հայեր կոտորեց և հազարաւորներու ալ կոտորման պատճառ եղաւ, վերջերս սկսեք է դարձեալ սոսկալի կերպով տանջել շրջակայ հայաբնակ գիւղերը, որոց վրայ բացարձակ իշխանութիւն կը վայելէ իբրեւ Սուլթանի հպատակ օգնականը անոր գործած արեւելահայ հաշակ վայրագութեան մէջ... (»

Ե. Կ.

(») Նոյն իմաստ թղթակցութիւն մը ստացած ենք ուղղակի Տրապիզոնէն այդ պատճառաւ չը պիտի հրատարակենք : Ծ. Խ.

Գահիրե, 28 Յուլիս
Գարալեքի իկ հայութիւնը վսեմ եռանդով մը մարդկային ամէն կեդրոններու մէջ, ուր բաւական թուով հայեր կային, ջանաց մամուլը գոյութիւնը վառ պահելով՝ ներկայ և ապագայ հին ու նոր սերունդին մտաւորական ու բարոյական զարգացմանը հոգ տանելու ազնիւ ու վեհ ջանքեր՝ որոնցմէ կօգտուի այսօր ամբողջ հայութիւնը :

Սկզբունքով ընդունուած է մամուլի գերին օգտակարութիւնը և հանրութեան մատուցած այն ծառայութիւնները, որոնցմով կը շինուի ու կերկրաբազուի յառաջգիմութեան ուղին :

Ամէն տեղ և ամէն երկիրներու մէջ՝ մամուլին զրական արժանիքը գնահատուած է երբ անոր ազնուագոյն նպատակն է եղած մարդկային ազգի միտքը մշակել, մարդել ու դատարարակել :

Ունեցանք մենք ալ այս ուղղութեամբ թերթեր որոնք կը շարունակեն անվատ կերպով յետադիմական տարրերուն դէմ կռուիլ, ազատամիտ խնդիրներ արժարձելով՝ մաքուր մտքերու և զգացումներու նոր, առողջ հասունք մը առաջ բերել : մեզ կը մնայ յարատեւութիւն մաղթել այդ կարգի հրատարակութիւններուն :

«Փիւնիկ»-էն վերջը Գահիրէի մէջ ունեցանք «Արշալոյս»-ը, որ կը հրատարակուի շաբաթը երկու անգամ. առ այժմ չենք շտապել յայտնելու մեր կարծիքը. շնորհաւորելով նախ իր բարի երեւումը, յաջողութիւն կը ցանկանք իրեն. մէկ երկու խօսք սակայն՝ բարեկամաբար ըսուած, չենք կարծեր որ անօգուտ անցնին բոլորովին : Երկրորդ թուին մէջ իսկ կը կարգանք հետեւեալ ծանուցումը. «հայկական նա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՍԻՐԱԿԱՆ ՏԱՀԱՎԱՍՏԱՆԻ ՆՈՐ

ԿԱՌՈՒՅՈՒՆԵԼԻԻ ԵՐԿԱՌՈՒՂԻՆԵՐԸ

(Շար. Ասխորի քիւնէ և Վերջ)

Անցնինք մէկալ երկու ծրագրերներուն :

Ատոնցմէ առաջինը՝ էնկիւրիի գիծը կուզէ շարունակել Անրաստիա, անկէ Երզնկա, անկէ Խարբերթի քովերով Տրապիզոնակերպ, Պատրաս և Պարս :

Այս գիծը մասնաւոր կապիտալ բնակարանութիւն ալ կը պահանջուի : Պատրասի Պոլսոյ և ալ տեղերու հետ : Ազոր համար ալ Անրաստիա, Երզնկա, Խարբերթ անագին շեղումը յանձն կանեն :

Բայց ազոր համար ալ այդ առաջարկը ընող դրամատէրերը կուզեն էնկիւրիէն մինչեւ Տրապիզոնակերպ տարածութեան ամէն մէկ քիւրմէթ-

րօին համար 20—35,000 ֆր. վճար մը և 99 տարի պայմանաժամ :

Այս առաջարկութեան հեղինակներն են Գերմանացի, Անգլիացի, և Ֆրանսացի դրամատէրեր :

Երկրորդ ու վերջնական ծրագրի հեղինակն է Տօյլ-Պանքը՝ միացած քանի մը ֆրանսացիներու և անգլիացիներու հետ : Առաջնութիւնը գերմանացիներուն է և և ձեռնարկը գերմանական է :

Ինչպէս նշանները կը ցուցնեն՝ այս ծրագրին է որ վերջնական յաղթութիւնը պիտի տանի :

Ատոր էութիւնը հետեւեալն է. էնկիւրիէն զիծը շարունակել Կեսարիոյ վիլայէթով : Տարուի մէկ կիրճով (կիրճին անունը մոռցեր եմ) մինչեւ Ատանա, անկէ Այնթապ (Ատանայէն Անտիօք տանող կարաւանի ճամբու միակ կիրճովը), Այնթապէն Հալէպ, անկէ Ուրֆա, Խարբերթ, Տրապիզոն, Պատրաս, Պարս և կամ Պատրաս կամ Պարսից ծով : Ահա ծրագրը, տարածութիւնը փոքր չէ. 2—3000 քիւրմէթ րօի մէջն է : Ամէն մէկ քիւրմէթ րօի վարձ կուզեն միայն 10,000 ֆրանք՝ ոչ աւելի և 99 տարի պայմանաժամ :

Ձեռնարկը համարեա զուտ վաճառական է : Մէկ կողմէն կը շահագործուին Կիլիկիոյ բոլոր դաշտային մասերը, հարաւային Հայաստանի և Միջագետքի բոլոր հարուստ տափարակները և, վերջպէս՝ Հնդկաստանի, ծայրագոյն արեւելքի և Պարսկաստանի վաճառականութիւնը կը կատարուի այդ գծով :

Այս գիծն է, ըսինք, որ յաղթութիւնը պիտի տանի : Կը կարծէք որ ծոռոտիկ Գիլոմ Բ. ի իզուր տեղը եկաւ Պոլս. Մեծ-Մարգասպանին սեղանակից եղաւ, անոր արիւնստ ձեռքը սեղմեց, անոր հետ գրկախառնուեցաւ... 300 միլիօն մահմետականներու անզուգական բարեկամ հրատարակեց ինքզինքը... զուր չէր ատկա. պտուղները ետքէն պիտի երեւան : Ու մենք կը կարծենք, որ ասիկա ստալինի պտուղն է՝ սա շահաւէտ ու ի զուտ ձեռնարկը Պիզմարքի զաւակներուն համար... :

Առաջիկայ սեպտեմբերին երկրորդ հետազոտող ձեռնհաս յանձնախումբը ճամբայ պիտի ընկնի ուսումնասիրութիւնը աւելի խորը սանելու հա-

հանգաց կոտորածներու թարգ-
մանութիւնը յաջորդ թուով պիտի
սկսինք՝ տեղւոյ անձկութեան
պատճառաւ :

Արդեօք որքան յարմարութիւն
և անհրաժեշտութիւն կը տեսնուի
ներկայիս հրատարակելով կոտոր-
ածներու նկարագրութիւնները,
որոնք գրեթէ շատ մը թերթե-
րու մէջ լոյս տեսած են արդէն .
այդ նիւթերով չէ որ կարելի
պիտի ըլլայ ժողովրդի ինկած
թոյլ տրամադրութիւնը բարձ-
րացնելու : Որքան ալ որ Հ. Շար-
միանի գրքովը յուզիչ լեզուով
մը գրուած ըլլայ, Արշալոյսին
մէջ անոր հրատարակութիւնը,
թէ իր ծաւալին անյարմար և թէ
կենսունակ այժմեութիւնէ մը զուրկ
կը գտնենք :

Հաստատ աղբիւրներէ կը տե-
ղեկանանք որ, «Փարոս» կրկին
իւր ժպտուն ու զուարթ դէմքը
ցոյց տալու է մեզ Պ. Ալփիարի
խմբագրութեամբ դարձեալ, ու-
րով կուենանք շուտով Եգիպ-
տոսի մէջ երեք հրատարակու-
թիւններ : մենք առաջիններէն
կուզէինք ըլլալ «Փարոս»ի երե-
ւոտը շնորհաւորելու համար . ու-
րով հետեւ իր վրայ շատ յոյ-
սեր տրուած են և իրաւունք ու-
նենալ կը կարծենք Պ. Ալփիարէն
անկեղծելու՝ խնամուած «Փարոս»
մը, որ կարենար աւելի բաւա-
կանութիւն տալ մեր գրական
պահանջներուն . չի մոռնանք
ի դէպ մեր գծողներէն յայտ-
նելու հոս «Փիւնիկ»ի խմբա-
գրութեան, որ կարծես կամովին
ճիշդ կը թափէ իր անհամ, պո-
ռոտախօս և որ և է շահեկանու-
թենէ զուրկ յոգուածներով իր
հանդէսը լեցնելով շուտով «Վա-
ղուան Չայն»ի տառօսին հասցնե-
լու զայն :

«Մահտիններու», «Լեռնական-
ներու», «Եակօններու» երկար

յոգուածները այնքան չեն շա-
հագրուեր մեր հասարակութիւնը
որ ձանձրացած է ալ այդ հում
նիւթերէն և իրաւամբ կը պա-
հանջուի գրողներէն աւելի բա-
րեխիզօրէն գրուած, առանց
կրքի և զբախտութեան, մաքի
լուրջ ու գեղեցիկ արտագրու-
թիւններ :

«Փիւնիկ»ի խմբագրութիւնը՝
եթէ ընթերցողի մը ակնոյցներով
կարդար իր հանդէսը, եթէ գուրս
գար իր յաւակնոտութեան և ինք-
նագովութեան շրջանէն, մենք
համոզուած ենք որ նոյն «Փիւ-
նիկ»ը կարող էր շատ աւելի լաւ
խմբագրուած լոյս տեսնել, յոգ-
ուածները աւելի շահեկան կըլ-
լային ու կը կարգացուէին ալ, և
այն ատեն ժողովրդականութիւն
գտնելու իրաւունք պիտի ունե-
նար :

Դեռ շատ ուշ չէ՝ «Փիւնիկ»ի
խմբագրութիւնը եթէ բարի տրա-
մագրութիւն ունենար ձանձրալու-
ի թերութիւնները, ու բերա-
նացի թէ գրուող տեղի ունեցած
քննադատութեանց իրաւացի կող-
մերը, պիտի յուսայինք որ մը
տեսնել իր թերթը ուղղուած և
մաքուր բովանդակութեամբ, երբ
իւր բաժանորդներէն շատերն ալ
պիտի զիջէին կտրատելու վեր-
ջապէս թերթիկները իր «Փիւ-
նիկ»ին, որոնց ծրարները՝ շա-
տերու գրասենյակներու վրայ
գիշուած տեսած ենք, առանց
բացուած իսկ ըլլալու :

Ինչպէս Պուլկարիոյ և Աղեք-
սանգրիոյ նոյնպէս տեղւոյ մէջ
«չը յիշուի»ի խնդիրը, մանա-
ւանդ վերջերս յուզուի սկսած է
350 ստորագրութիւններով հան-
րագրութիւն մը պատրաստուե-
ցաւ ժողովրդի կողմէն թէմիս
փոխ-տեղապահին յանձնելու նպա-
տակով՝ յառաջիկայ կիրակի

օրուանէ սկսեալ Օրմանեանի ա-
նուն ալ չը յիշուի տալու Ս. Եկե-
ղեցիին մէջ, կը յուսանք որ տե-
ղական իշխանութիւնը պիտի ուզէ
ժողովրդի կամքը յարգել :

ՏՍՐՍՍԻԶ

Սօֆիա, 2 Օգոստոս

Այս ամսոյ 8ին թաղապետա-
կան ընտրութեանց հետ միասին
պիտի ընտրուին նաև սյուլկար
նախնական վարժարաններու
վարչութիւնը և օտար ազգերու
գաղութաց հոգաբարձութիւնը .
ամէն սեղ օրինաւոր պիւրօներ
կազմուած են կառավարութեան
հսկողութեան տակ ընտրու-
թեանց ձեռնարկելու համար .
այս առթիւ կրթական նախարա-
րութիւնը շրջաբերականով մը
թէ նահանգապետներուն և թէ
տեսուչներուն պէտք եղած հրա-
հանգները տուած է . նոր ընտ-
րողական օրէնքի ուժովը «հո-
գաբարձու» ընտրելու իրաւունք
ունին ամէն անոնք, որք ուսեալ
և կանոնաւոր գաղութի մը շրջա-
նը բոլորած և 30 տարին ալ
լրացուցած են . իսկ միջնակարգ
կրթութիւն ստացողներուն օրէն-
քը դիմում մը կընէ մինչև 25 տա-
րեկան հասակը Հայաստանի
ընա խօսքը չկայ : Հասարակու-
թեան կամ համայնքի մը ներկա-
յացուցած քանտիտան պիւրօն
անխտիր պիտի ընդունի և ա-
ռանց որ և է առարկութեան,
քանի որ պետական բնութիւն
կրող խնդիր մը չէ, այլ ազգա-
յին ներքին գործերու խնամա-
կալութեան շուրջը :

Ասով կը վերանայ այդ սնամէջ
կուրծները և սեղացի հայերուն
այդ հակակրական վարմունքը
դէպի գաղթական տարրը . վասն
զի օրէնքը ոչ մի սեղմում չէ
դրած, իսկ մեր ամենատղէտ ա-
ղանքը միջոցներու խտրութիւն

չեն ըներ իրենց եղբայրները
ազգային գործերէ հեռացնելու,
փաստ բռնելով տեղական օրէն-
քի պահանջումները : Մինչդեռ
Պուլկարիայի հրեաները իրենց
գաղութներու բարգաւաճ ու նա-
խանձելի վիճակը կը պարտին
իրենց դերմանացի և աւսարիացի
ազգակիցներուն, բոլորը օտա-
րահպատակ : ներկայ ընտրու-
թիւններու հանդէպ փափաքելի
է որ տեղացիի և գրսեցիի տաղ-
տուկ խօսքերը վերցուի . և
միայն արժանաւորը ու օգտակա-
րը ընտրել, և այնպիսի անձեր
որոնք պարտքի ու գաղափարի
նուիրուած մարդիկ ըլլան, խոչ
պարտաճանաչ զգացումներով տո-
գորուած : Ֆիլիպէն կենդանի
օրինակ է, տղէտ հոգաբարձու-
ներու կամայական ու բռնական
ընթացքը, ոչ միայն այդ նա-
նաւոր խառնակութիւններուն
սկզբնապատճառ եղած է, այլ
նաև ազգային հաստատութիւն-
ները կատարեալ ախտաբ փերա-
ծելու :

Բայց ժողովուրդը մեղաւոր է
որ հեռատես և շրջահայեաց չէ
նա ամէն բան «աղապէս կըսու-
սէ» : Եւ ի՞նչ կարելի է սպասել,
երբ կասկածելի ճամբայներով
յառաջացած շողքորթ պանդու-
կապետ մը, աղերսագիր ու մուր-
հակ գրող ողորմելի մարդուկ մը,
խեղճուկ հարուստ մը սերունդի
մը դաստիարակութեան զօրավի-
գը ըլլան և մեր կրթական բու-
րոտանները խնամելու պաշտօն
ստանան : Հետեւանք շատ պարզ
ու յստակ է ջիւղ ջուրի պէս :

Բայց լսածնուս կարեւորու-
թիւն տալով, կիմանանք որ
Պուլկարիոյ կրթական նախարա-
րութիւնը ազգու միջոցներ ձեռք
պիտի առնէ իր գերիշխանու-
թեան տակ դնելու օտար դաւա-
նութիւններու գաղութները, ընդ

մաններուն բաւական մօտ ըլլա-
լով (°) կըսէ Ջիւղիւնէ՛վ ոտեսական
«ազգեցողութեան շրջանակին» (զօն
կամ ընթաց տ'էնֆիլան) կը վնասէ :
Այդ բացասական ձեռնոյն ալ չի բա-
ւականանալով իսկոյն առաջարկեց
ոտեսական զօն մը ծրագիրը—կարս,
էրզրոմ, Տիարաքէթի, Պաղտաս
եւայն, որ ի հարկէ չընդունուեցաւ,
բայց որի հետ գլորեց և Գերման
ծրագիրը :

Իսկ այս երրորդ ու վերջին գիծը
արդէն խիստ հեռու է ոտեսական
«չըջանակէն» և այլևս խանգարե-
լու հնար մը չկայ ուղղակի ճամբով :
Այժմ ալ խանգարելու տարբեր
ծրագիր մըն է մէջ ընկեր ոտեսաց
կողմէն : Այդ նոր ծրագիրը Պարս-
կաստանի երկաթուղիի խնդիրն է :
Անքանզորպօլ կայարանէն արդէն
գիծը կը շարունակուի դէպի Էջմիա-
ծին, Երեւան, Հին-Նախիջևան և
Ջուղայ-Երասխի ակիր, Պարսից սահ-
մանը . անկէ ալ կուզեն տանիլ Թաւ-
րիզ և ապա մինչև Պրնտեր կամ
Պարսից ծոցը : Եթէ յաջողի այս,
էպպէս խանգարած կըլլան Գերման
ծրագիրը . . .

Մենք համոզուած ենք որ Պոլսոյ

դեսպանները հանգիստ չեն մնար և
ամէն մէկը մէկ մէկ խաղալու լոկի
մնջիկ կը պատրաստէ Բ. Դրան ու
Սուլթանին համար : Անոր սուրի,
մեզի ալ սուր, ահա պետութիւննե-
րուն յախանական վարմունքը,
անոնց գործելու մտական եղանակը :

Հիմակ քիչ մը կանգ առնենք հա-
յաստակէտին վրայ :
Եւրոպացիին երկաթուղի կը շինէ
հայուն ի՞նչ . . . կըսեն թիւրեւ ըն-
թերցողները :

Եթէ վերջին ծրագիրը յաջողի՝
ամբողջ կիլիկիոյ, Ռարբերգի և
Տիգրանակերտի վիլայէթներու յա-
րաբերութիւնը կը գիւրանայ, աչ-
խատաւոր գասակարգը կը հաւաքուի
գծի և կայարաններու շուրջը .
հարստութիւն, ստակ երեւան կու-
գան Թուրքիոյ ներքին գաւառները
և Ղաղարոսի պէս սղգատ ժողովուր-
դին քովը . բերքերը, երկրի հա-
րուստ բայց մինչև օրս անօգուտ
մնացող բերքերը կարտահանուին .
գրադուսք, գործ կը ծնի ներքին
գաւառներու մէջ քիչ ու շատ մա-
ւոր պաշար ունեցող, կրթութիւն

ստացած երիտասարդներու համար :
Այն բազմաթիւ թարմ ուժերը . որ
ամէն օր ներքին գաւառներէն դէպի
Իզմիր, Պոլս, Եգիպտոս, Պուլկա-
րիա, Ամերիկա, Կովկաս կերթան
աշխատանք որոնելու՝ ուր և կը
փճանան թէ ֆիզիքապէս և թէ բա-
րոյսպէս՝ կը մնան երկրին մէջ,
կանցնեն որդեծնութիւնը, կը խը-
տացնեն հայ ազգայնակութիւնը,
կուենան իրենց մէջ քիչ ու շատ
կրթուած, կազմակերպող ուժեր,
կուենան քիչ ու շատ հարստու-
թիւն, ստակ գործելու այդ զօրաւոր
դեղերէն մէկը . քիչ մը աւելի կը
թիթեւան սպանիչ պարտքերէն ու
դժոխային հարկերէն . . .

Օգուտները շատ ու շատ են : Կը
զօրանայ հաղորդակցութիւնը, կա-
ծի փճառականութիւնը, կը զար-
գանայ երկրագործութիւնը և ընդ-
հանուր արդիւնագործութիւնը :

Իսկ այս ամէնը փրկութեան
նպատակ պայմաններ են և ոչ ան-
տարբեր կամ արգելադրի հանգա-
մանքներ, Գիտեմ՝ Եւրոպացիին պի-
տի անխիղճ կերպով շահագործել,
պիտի ծծէ տեղացիներուն արիւնը . . .
բայց ինչ ալ ըլլայ՝ ներկայէն հազար

անգամ աւելի հարստութիւն կըլլայ,
ստակ կը շարժուի :

Առաջին գնացքի սուլոցը, մեր
կարծիքով, տեսակ մը ազգարար
կըլլայ մեր երկրի նախ անտեսական
և վերջէն քաղաքական փրկութեան
համար :

Կեդրոնական մեծ գիծը մենակ չի
մնայ . կուգան և կողմակի դիծեր
դէպի այս ու այն կարեւոր քաղաք-
ները կամ հանքային հողերը . . .
եւայն ևւայն :

Երեւակայութեան թեւերուն վրայ
թողիլ մեզի շատ հեռու կը տանի .
սպասենք ժամանակին և դէպքերու
երկաթէ տրամաբանութեանը :

Բայց չմոռնանք երբէք, որ «եր-
կաթուղու առաջին սուլոցը ազգակ
է նախ անտեսական փրկութեան,
եւքէն ալ քաղաքական վերածնու-
թեան» :

Աշխատինք և յուսանք :

ՅԱՄԳ

որս նաեւ մեր միայն «անբան- ներ» արտագրող դպրոցները :

Ուրախութեամբ կիմացնեմ որ Սօֆիան գեղարուեստի վարժա- րանէն շրջանաւարտ ելաւ Պ. Միհրան Կարապետեան (Ֆիլիպէ- ցի), որ դեռ պղտիկուց ծանօթ է իր բնատուր ձիրքով, գծագ- րութեան և նկարչութեան մէջ : նա մի քանի անգամ մեծ մրցա- նակներու արժանացած է : մի ուրիշ շրջանաւարտ ալ զինուորա- կան դպրոցէն : Սլիվէնցոց աչքը լոյս, իրենց մտրաւին հասան : քիչ օրէն անոնք ալ սպայ մը կունենան : Կը մնան պեռ երկու հոգի, մէկը Շումլացի, միւսը Սլիվէնցի որոնք մի քանի տարիէն իրենց իտէալին կը հասնին և բազմաթիւ կըլլան փայլուն կո- ճակները կրելու :

Ալ մեզը ու կարագ անպակաս պիտի ըլլայ :

Տեղական գործերը լաւ են : Մեր տէր-պապան վերջապէս «բարեհաճեցաւ» անգին Օրման- եանի անունը չը յիշել, իր այդ «մեծ շնորհը» վայելելով երջա- նիկ ենք : Միայն սաչափ կիմա- ցընենք, որ «բանին մէջը բան չկար», այլ ինչ որ եղաւ, տէր- պապան չափազանց յամառու- թենէն էր : իրեն խոնարհ կեր- պով դիմուեցաւ և զինքը պա- տասխանատուութենէն զերծ պա- հելու համար ճամբայ ալ ցուցու- ցին : Ժողովուրդը իր կամքը յարգել տալու միշտ իրաւունք ունի : Հիմակու հիմակ այսչափ : S.

Պրախա, 2 Օգոստոս

Աւետիս, սթափեցաւ վերջապէս տեղուս հայ հասարակութիւնն ալ, զգաց թէ այլեւս ժամանակ է վտա- բելու հայկական եկեղեցիի բէմէն ազգի դաւաճան էֆէնտիներու ա- նուններն :

Երէկ կիրակի տեղուս սուրբ Աս- տուածամօր եկեղեցիին մէջ սովորա- կանէն աւելի բազմութիւն մը լցուած էր : ամէնուն դէմքին վրայ մտալ բան մը կար : Առաքելոցի պահուն անսովոր շարժում մը տեղի ունեցաւ ժողովրդին մէջ : Ամէ- նուն կերպարանքը լարուած ուշա- գրութիւն մը կարտայայտէր : Երբ կարգը հասաւ յիշատակութեան «եւ զի ստանդնուպօլսոյ Պատրիարք Տեառն Տեառն» միեւնոյն զսպանակէ շարժած մեքենայի մը նման ամբողջ ժողովուրդը միահա- մուտ թնթացուց ցանկալի բառերն «չը յիշուի դաւաճանը» :

Պատարագիչ քահանան յանկարծ շփոթած ու շուարած պարտաւորե- ցաւ տեղի տալ ժողովրդին կամքին առջև, ամբողջացունելով կիսաաթո- ղուած պարբերութիւնն հետեւեալ կերպով. «Ձեզեւոր հայրն իմ Մա- թէոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան» :

Ա՛հ, չէք կրնար երեւակայել, որ աստիճան խանդ ու եռանդ պար- գեւեց բոլոր ներկայ ժողովրդին այն զուգադիպութիւնն որով Իզմիրլեա- նի անմահ անունն կը գերակշռէր վարկաբեկ Օրմանեան էֆէնտի ան-

ուն : Վերջապէս արգարութիւնն ու ճշմարտութիւնն վերստին տիրապե- տած էր մեր եկեղեցիին մէջ, վանեղ- լով իր ծոցէն խաբեբայ մանկաւիկ մը Սուլթան Համիտի քմահաճոյք- ներուն : Եւ ժողովուրդը իր փափա- քին հասած էր : գոհունակութիւնն ամէնուն երեսին վրայ կը փայլէր : Ամբողջ Ռումանիոյ մէջ առաջին քայլը դարձեալ Պրախա առաւ : Կը ցանկայինք որ զէթ ուրիշ քաղաք- ներ ալ արգար նախանձախնդրու- թեամբ մը համակուած հետեւէին անոր օրինակին՝ վտարելով իրենց եկեղեցիներուն մէջէն յիշատակու- թիւնն Օրմանեան էֆէնտիին որ մեր ազգային իրաւունքներուն կատարի բռնաբարոզն է եղած իր թրքամոլ քաղաքականութեամբն :

ԿՇԻՌ

Յ. Գ. — Կիմանամ թէ չը յիշուի ինչպիսի Պատրիարքարանին տեղե- կազրել որոշած է սեղուս հոգաբար- ձութիւնն եւ քահանան :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Նախապէս տրուած որոշման համեմատ, Կիլիկիոյ կաթողիկո- սութեան ենթակայ բոլոր եպիս- կոպոսները և վարդապետները պիտի մասնակցին նոր կաթողի- կոսին ընտրութեան : Պօլիս զրու- նուող անպաշտօն և պաշտօնով Կիլիկիան եկեղեցականներն ա- մէնքն ալ Ատանա պիտի երթան կաթողիկոսի ընտրութիւնը կա- տարելու համար :

Պօլսէն չը մեկնողը, իր կար- ծիքները զրաւոր կրնայ յայտ- նել :

— Ալէքսանդրի Արքեպիսկո- պոսի վիճակը հետզհետէ կը ծան- րանայ : հիմա ալ լեզուն ծանրա- ցեր է : Առհասարակ վիճակը վտանգաւոր է, բոլորովին ապա- քինելու յոյսն ալ քիչ է :

— Օգոստոս 4ին Քաղ. Ժողովը առաջնորդական վիճակներէն ե- կած տեղեկութիւններու վրայ հիմնուելով նկատողութեան առաւ ազգային վարժարանաց արտօնա- գրի կարեւոր ինչորը և խոր- հըրդակցելէ վերջը, որոշեց հարկ եղած դիմումներն ի գործ դնել :

— Ներսէս եպիսկոպոսը ստու- գեր է որ Վանայ Սպակերտ գա-ւառին կարօտելոց անուամբ անգլ- նպատամատոյց մարմինն եկած 300 ոսկիի արմտիքը 150 ոսկի հնչիւն դրամի ծախելով գրպա- ներ են : այս պատճառով իրեն դիմող սպակերտցիներուն չէ ու- զեր դրամ տալ : Ասոր վրայ դի- մողները կաթողիկոսներուն երթա- լով երկերկու մէճիտ առեր և ի- բենց արձանագրութիւնը փոխել տուեր են :

— Մոսկուայի հայոց նպաստովը Հաճնոյ մէջ նոր որբանոց մը պի- տի բացուի :

— Սահակ եպիսկոպոս Խաղա- եան Ատանա պիտի երթայ իրը պատուիրակ Պատրիարքարանի կողմէն և պիտի հսկէ Կաթողիկո- սին ընտրութեան գործերը :

— Գ. Ճեմարանի տեսչութենէն հրաժարուած Կոստանեան, Կա- թողիկոսէն կենսաթոշակ ինչը- րած է : «Մշակ» կը հարցնէ : ասանեակ տարիննրով 2—3 հա- շար ըուպլի ստացող և ազգային ոչ մի նպատակով 5 ըուպլի ան- զամ չը նուիրող մարդը կենսա- թոշակ կուզէ, իսկ միւս խեղճ ուսուցիչները ինչ ընեն :

— Վառնայի Ազգ. երկսեռ վար- ժարանաց Հոգաբարձուներու ընտ- րութիւնը կատարուեցաւ կիրակի օգոստոս 8ին :

Հին Հոգաբարձութենէն ընտ- րուեցան՝

- Տեառք Յովակիմ Թովմասեան Գրիգոր Կիւլպէսէրեան Եւ երեք ուրիշ նորեր Գալուստ Աւագեան Կարապետ Սուլթանեան Սարգիս Մուրատեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տրէյֆիւսի հռչակաւոր փաս- տարան Լապօրիի կեանքին դէմ փորձ մը ըրին հակատրէյֆիւսա- կանները : Լապօրի մէջքէն գնդակ մը ընդունեց : Համակ- րելի փաստարանի վիճակը վտան- գաւոր չէ : Ամէն անգերէ հա- մակրական հեռագիրներ կը հաս- նին Լապօրիի :

Տրէյֆիւսի բոլորովին արդա- րանալը կսպասուի : Ամենախիստ մեղադրող վկաներն անգամ Տրէյ- ֆիւսի յանցաւորութեան հաս- տատ փաստ մը չը բերին : ամ- բողջովին մեղադրանքը հիմ- նուած է միմիայն ենթադրու- թիւներու վրայ :

— Տրէյֆիւսի երկրորդ փաս- տարան Պ. Տէմանժ սպաննագիր մը ստացեր է որով կը յայտա- բարուի իրեն թէ՛ իր պաշտպա- նութեան ճառը պէտք չէ ըսէ :

— Ռուսական դեսպանը թշնա- մական դիրք մը բռնած է դէպի Սուլթանը Պաղատաի երկաթուղ-ւոյ շինութիւնը գերմանացիներ- ան տալու արամագիրը ըլլալուն համար :

— Կըսուի թէ Ռուսիա և Բ. Իուսը համաձայնած են Ռուսօ- թրքական սահմանազլխու վրայ առանձին գոմիսէր մը նշանակել քրտական ապագայ ըմբոստու- թիւներուն առաջը առնելու համար, բոլորովին անկախ այն գոմիսիօնէն որ վերջերս զրկուած էր քննութիւն կատարելու քրտա- կան վերջին անկարգութիւննե- րուն մասին :

— Նիւ-Եօքքէն հեռագրով կը հաղորդեն անգլիական թերթի մը թէ Սէնտ Տօմիսգօյի ապըս- տամբները լիովին խորտակուած են Պուէրտօ-Բլաւտայի քով կա- ռավարութեան զօրքերէն :

Ապստամբներու կորուստը այն- քան մեծ է որ կը կարծուի թէ ապստամբական շարժումները ալ

բոլորովին տաքած կարելի է համարել :

— Փորթուգալիոյ մէջ ժան- տախտ երեւցած է, մեռնողները հարիւրին 40 տոկոս կը կազմեն :

ԵՓՐՈՍԻՆԷ ԹԱՐԱԲՃԵԱՆ

Կը դատախօսէ կանանց վերաբեր- եալ ամէն տեսակ զգեստ ձևելու կարելի : Չափաւոր զին, Փ. Պօլիս, հրապարակ Գնեազ Պօ- լիս, թիւ 200 : 4—4

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐ

Բամաւո-Բաքիպաւ Գրեց ԲԱԲԱ-ԳԱՍՊԱՐ : Պուլկարիոյ մէջ գինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սան- թիմ : Ցանկացողները թող գիմեն Շար- ժուրի խմբագրութեան :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐՃՈՒՄ»

Կը սպագրուին ամէն լեզուէ այցետոմն, հասցեատոմն, նամա- կազուր, հարսանեկան հրաւի- բագիր, մահազգ, ինչպէս նաև պրօչիւռներ :

Գիները յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

ԿՈՒՉԻՔ ՀԱՐՍՏԱՆԱԼ Դիմեցէ՛ք Մ. Թիւթիւնճեան եւ ընկ. ի Ռուսնուք

Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սօֆիա քաղաքի Պուլկարական կա- տավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի սով- սակները : Օտար երկիրներէ յանձնարարու- թիւններ եւ կընդունուին :

ՊՕՐՍԱ

Table with exchange rates for various currencies and goods, including items like 'ՊՈՒՂՏԱՅ' and 'ԱՐԲԱ'.